տնանխմբութիւնը՝ Էջմիածնի յայտարարած ծրագրով, և առաջ քշել իր ծրագիրը, և այդ նպատակով նոյնիսկ բոյկոտ հրատարակեց Էջմիածնի ոտերի դէմ։ Այսօր ևս նկատվում է մի այդպիսի ձգտումներ։ Մի կողմից այն հանգամանքը, որ «Հօրիզոն» թերթը, որ մի քանի ամիս «Համազգային Մեծ Եղեռնեան» վերնագրով յօդուածներ էր գետեղում, վերջին ժամանակներս սկսել է լռութիւն պահել և նոյնիսկ չը տպագրեց Էջմիածնի յայտարարած ծրագիրը՝ հոկտեմբերի 12—13-ին կայանալիք յօբելեանական տօնախմբութիւնների մասին, միւս կողմից ի նկատի ունենալով, որ այդ հարցում «Հօրիզոն»ի հետ համերաշխօրէն գործող մի այլ խմբակ հաջ է դրել յետաձգել յօբելեանը և կատարել նոյեմբերի 22-ին—պարզ ցոյց են տալիս, որ զարձեալ ձգտումներ կայ՝ խափանել յօբելեանի կատարումը։ Առա այդ տեսակէտից ծանր պատասխանատուութիւն կայ Մեսրոպ եպիսկոպոսի վրա։ Իր վարմունքով հեռացնելով ասպարէզից յօբելեանական մարմինները, նա ամեն մի ջանք պէտք է գործ դնէ և աշխատէ, որ 1) մեծ շուքով և հանդէսով կատարվեն յօբելեանական հանդէսները հոկտ. 12-ին և 13-ին, 2) հանգանակութիւնը յօգուտ ղղպրոցական ֆօնդի լայն մղումն և ծաւալ ստանայ, որովհետև մեծ ամօթ կը լինի, եթէ Թիֆլիսը և Թիֆլիսի թեմը լայն կերպով արձագանք չը տան ղպրոցական ֆոնդի հանգանակութեան։

Համազգային Մեծ Եղեռնեանը և նրան յաւերժացնող ակտ ղպրոցական ֆոնդը արդէն, շնորհիւ «Մշակի» պրոպագանդայի և հայ հասարակութեան լաւագոյն և բանիմաց մասի համակրութեան, այնքան ժողովրդականութիւն է գտել այս մի տարվայ ընթացքում, որ ոչ մի խմբակ, լինի նա «հօրիզոնական» կամ այլ, չէ կարող իր ընդդիմադրութեամբ կամ անզօր բոյկոտով խափանել, և Էջմիածնի տօնակատարութիւնները հոկտ. 12-ին և 13-ին, համոզված ենք, էլ կայացնեն աւելի մեծ շուքով և փայլով, քան անցեալ տարի, բայց և այնպէս Մեսրոպ եպիսկոպոսի վրա կը ծանրանայ ահագին պատասխանատուութիւն, եթէ Թիֆլիսում հանդէսները և ղպրոցական ֆոնդի հանգանակութիւնը Թիֆլիսում և թեմում անաջողութեան հանդիպեն։

Հ. Ա.

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՕՕԲԵԼԵԱՆԸ

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի հայ վաճառականութիւնը, հրաւէր ստացած լինելով Ամենայն Հայոց Կաթողիկոսից՝ մասնակցել Էջմիածնում կայանալիք յօբելեանական հանդէսներին, որոշել է ընտրել մի առանձին պատգամաւորութիւն, բաղկացած 10—15 հոգուց, կատարել հանգանակութիւն յօգուտ ղպրոցական ֆօնդի և պատգամաւորութեան միջոցով մատուցանել Վեհ. Կաթողիկոսին։

—

Հանգուցեալ Եգոր Զորաբեանի կտակակատարները այս օրերս որոշումն են կայացրել զնել մի մեծ կալուած Թիֆլիսում Էջմիածնի անունով և միացնել Համազգային Մեծ Եղեռնեանի առիթով հաստատված ղպրոցական ֆոնդին, պայմանով որ այդ կալուածի արդիւնքը գործադրվի Թաւրիզում հիմնվելիք թեմական ղպրոցի կամ Ատրպատականի թեմի ծխական ղպրոցների պահպանութեան համար։

—

Մեզ հաղորդում են Էջմիածնից, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը առաջարկել է կենդանի Թիֆլիսի Կենտրոնական Նպաստամատոյց Ընդհանրաժողովին յայտնցնել իր մօտ գտնված 75,000 ր. գումարը ղպրոցական ֆօնդին, պայմանով որ նրա տոկոսիքը գործադրվի ղպրոցների պահպանութեան վրա այն հայ գիւղերում, որոնք ամենից շատ վնասված են եղել Թուրք-հայկական ընդհարումների ժամանակ։

—

Մենք առաջարկում ենք, որ քաղաքիս բոլոր առևտրական, հասարակական հիմարկութիւնները, ուր հայ անդամները աչքի ընկնող թիւ են կազմում, ինչպէս բանկային հաստատութիւնները, կլուբները, իրանց եկամուտներից որոշ գումար յատկացնեն յօգուտ ղպրոցական ֆոնդի և մասնակցեն այս և այն ձևով Էջմիածնի տօներին։

—

Համազգային յօբելեանի յիշատակին «Արօր» ամսագիրը հրատարակվելու է մի հատոր, բացառապէս նուիրված յօբելեանին, և տալու է «Հայկական տպագրութեան» լիակատար պատմութիւնը, բազմաթիւ պատկերներով, աշխատութիւն Թիւրքահայ գրող Արշակ Ալպոյաճեանի։ Այս հրատարակութեան ծախքը յանձն է առել պ. Միքայէլ Աբրամեանցը։

—

Բազում Հայոց Կուլտուրական Միութեան հրատարակչական սեկցիան, սեպտեմբերի 18-ին կայացած իր նիստում, զբաղվել է համազգային յօբելեանի տօնախմբութեան հարցով և որոշել է 1) հոկտեմբերի 13-ին կազմակերպել գրական-երաժշտական երեկոյթ կենդանի պատկերներով, 2) յօբելեանը յաւերժացնելու համար հրատարակել կլասիք մատենագիրները «Համաշխարհային մատենադարան» անունով, որի առաջին հատորը արդէն տպվում է։ Այդ հատորը պարունակում է Գի դը Մօպասանի մի քանի լաւագոյն պատմուածքները և նրա «Միրելի բարեկամը» (Cher Ami), Թարգմանութիւն Հ. Առաքելեանի։ «Համազգային Մատենադարանը» բաղկանալու է 75 հատորներից։

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԱՂԷՏԻ ՄԱՍԻՆ

—

Սօսկիա կայարանի մօտ տեղի ունեցած ճանապարհորդական գնացքի խորտակման նկարագրութիւնը ակամտեսները անում են սարսափելի գոյներով։

Դժբաղդութիւնը տեղի է ունեցել ընդամենը 10—12 վայրկեանում։

Մինչև այժմ պարզվեց, որ սպանվել են 32 հոգի, որոնցից երկուսը միայն կին են. բացի դրանից՝ սպանվել են դարձեալ 13 հոգի, որոնց ով լինելը տակաւին որոշված չէ։

Լուրերի համաձայն՝ սպանվածների թիւը 45-ից պակաս չէ։

Ծանր ու թեթև վիրաւորվել են ընդամենը 96 կին և տղամարդ, որոնք համարեա բոլորն էլ ռուսներ են, բացի երեք մահմեդականից և հետևեալ հայերից.

1) Յովհաննէսեանց Վասան Յովհաննիսեան, 31 տարեկան՝ թեթև վիրաւորված։

2) Ստեփանեանց Անանա Դէորգեան, 23 տ. (երեխայի հետ ապրում է Բաստաւոմում)։

3) Դանիէլեանց Միքայէլ Սիմէոնեան, 16 տարեկան։

4) Տէր-Ներսէսեանց Սօֆիա Յովհաննիսեան, 32 տար. թեթև վիրաւորված։

5) Տէր-Ներսէսեանց Վարդան Մինասեան, 18 տարեկան, թեթև վիրաւորված։

6) Ստեփանեան Հրաչիկ։

7) Շաղվալեանց Ստեփան Յովհաննէսեան, 63 տարեկան։

Բացի յիշեալ վիրաւորներից, մօտ 46 հոգու ուղարկել են Տիֆլիսէցկիի հիւանդանոցը։

Սպանվածները բոլորը ռուսներ են։

Բաստաւոմից աղէտի տեղն է մեկնել Նովոչերկասկի զատաստանական պալատի դատախազ Իվ. Պոպովկին՝ դժբաղդութեան պատճառները քննելու համար։

Ռուսական շները ոչ մի չարագործի հետք երևան չը հանեցին դժբաղդութեան տեղի մօտերը։

Դէպքի տեղը հասաւ ճան. հաղ. Մինիստր Բուխլովը, որ անձամբ համոզվեց, թէ աղէտի պատճառը միայն փչացած ռելսների և փչացած գծի մէջ է կայանում։

ՄԻ ԲԱՆԻ ԽՕՍՔ ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ ՕՐՇԱՏԱԿԻՆ

—

50-ական թուականներին՝ որպէս փորձ՝ կառավարութիւնը օգնհանութեան «ակցիզը» ամրգախօսութեամբ կապալով էր տալիս Հայրս Երևանի նահանգի ամբողջ ակցիզը կառավարութիւնից կապալով մի քանի տարով վերցրել էր, ուստի և ինձ վիճակվեց Հէնս-Նախիջևանի ակցիզի կառավարչի պաշտօն ստանձնելու պարտաւորութիւնը... Եւ հէնց այդ թուին—1858-ին—Ծանօթացայ Գէորգ Բարխուդարեանի հետ, որը Դօրբատի համալսարանը թողել էր աչքերի տգեղութեան պատճառով և Կովկաս՝ հայրենիք էր եկել ու ստանձնել Հէնս-Նախիջևանի գաւառական վարժարանի ուսուցչի և տեսչի պաշտօնը։

Այսպէս ասա, Գ. Բարխուդարեանի հետ իմ մտերիմ բարեկամութիւնս տուեց ինձ այն մեծ օգուտը, որի համար ես գոհանում եմ թէ Աստուծուց և թէ իմ լաւ բարեկամից։ Այո, նա առաջինն էր, որ իմ ձեռքից առաւ «Պնդել քաղաքի պատմութիւնը», «Նարեկը» և գրաբար լեզուով գրված ուրիշ հին գրքեր և սրանց տեղը ինձ տուեց ընթերցանութեան համար անմահ Խ. Աբովեանի «Վէրք Հայաստանի» հոդեշունչ գիրքը, ինչպէս և Ստ. Նազարեանցի աշխատութեամբ լոյս ընծայված երկհատոր «Հանդէս նոր հայախօսութեան», աշխարհիկ բարբառով այլևայլ երկեր։

Այո, նրա բարեկամական խորհրդով՝ ես բաժանորդ գրվեցի Մօսկվայում նոյն պրօֆեսոր Նազարեանցի հրատարակութեամբ լոյս տեսնող «Հիւսիսափայլ» ամսագրին, որով բաղդ ունեցայ ծանօթանալու 60-ական թուականներում մեր յայտնի իդէալիստ գաղափարական գործիչների՝ անմահ Միքայէլ Նալբանդեանի, Սուլթանշահի, Ի. Պապազեանցի և շատ ուրիշների հետ։ Այդ հանգամանքն ինձ առաջնորդ և դաստիարակ եղաւ իմ ապագայ գործունէութեան ընթացքում անխարդախ և շիտակ ուղիով ընթանալու և գործելու։ Գէորգ Բարխուդարեանի բարեկամական խորհրդին եմ պարտական, որ ինձ ազատեց անպատճառ գնալ Վան՝ Վարագ՝ Խրիմեանին և Գարեգին Սրուանձտեանցին աշակերտելու և նրանց ազգասիրական և հայրենասիրական ոգով ներշնչվելու։ Վանի Վարագի դպրոցներին այդ ժամանակ մատակարարված ուսման շնորհիւն էր, որ ես ունեցայ ամբան պաշար, որ վերադառնալով 1864 թուի վերջերը հայրենիք՝ միւս տարին բարեխիղճատակ Բաղչեան Ստեփանոս աբգեպիսկոպոսից և թեմական դպրոցի տեսչից և հոգաբարձուից ստացայ հրաւէր դպրոցում մանկավարժական դասեր և դաստիարակչութեան պաշտօն վարելու։ և այդ ասպարէզում ծառայութիւնս շարունակվեց մինչև 38 տարին։

Գէորգ Բարխուդարեանի հետ ունեցածս մտերիմ բարեկամութիւնից անցած էր մօտաւորապէս 19—20 տարի։ Եւ երբ 1877